ԹԵՄԱ 3 ԱՄԵՐԻԿԱ

ԴԱՍ 3.6. Լատինական Ամերիկա: Բնակչությունը, Տնտեսությունը

• • •

Եվրոպացի գաղութարարները 16–17–րդ դդ հրի ու սրի մատնեցին տեղացիներին ու կործանեցին հնդկացիների քաղաքակրթությունը: Հատկապես տուժեցին լեռնաբնակ զարգացած հնդկացիները, որոնց գրեթե կեսը զոհվեց: Եվրոպացիները տեղաբնիկներին պարտադրեցին քրիստոնեությունը, մասնավորապես՝ կաթոլիկությունը: Հետագայում Աֆրիկայից բռնությամբ սկսեցին բերել մեծ թվով նեգր ստրուկներ՝ պլանտացիաներում աշխատելու համար: Աշխարհամասում մեծ թիվ են կազմում խառնածինները. եվրոպացիների և տեղաբնիկների (մոնղոլոիդների) խառնամուսնությունից ծնվածներին անվանում են մետիսներ (Անդյան երկրների բնակչության հիմնական մասը) եվրոպացիների և նեգրերի խառնամուսնությունից ծնվածներին՝ մուլատներ, հնդկացիների և նեգրերի խառնամուսնությունից ծնվածներին՝ սամբոներ: Նեգրերն ու մուլատները գլխավորապես ապրում են մայրցամաքի արևելքում և Կարիբյան ծովի ավազանի երկրներում, սպիտակամորթները՝ մայրցամաքի հարավարևելքում՝ Արգենտինա, Ուրուգվայ: Հնդկացիները կազմում են աշխարհամասի 10%–ը: Նրանք հիմնականում ապրում են լեռներում և ամազոնյան անտառներում: Մեծամասնություն են կազմում Պերուի և Բոլիվիայի բնակչության մեջ:

• • •

Տարածաշրջանի տնտեսության վրա դեռևս նկատելի են գաղութային անցյալի հետքերը: Գաղութային փուլում համեմատաբար զարգացած էր երկու ճյուղ՝ **ազնիվ մետաղների արդյունահանումն** ու **տնկատափերում արևադարձային մշակաբույսերի աճեցումը**, որոնց արտադրանքը գերազանցապես արտահանվում էր Իսպանիա և Պորտուգալիա: Այժմ էլ տնտեսությունը միակողմանի ուղվածություն ունի և մեծապես կախված է արտաքին շուկայից: Տնտեսությանը բնորոշ է **բազմակացութաձևությու-**

նը, կախվածությունն օտարերկրյա կապիտալից, նեղ մասնագիտացումը և պետական սեկտորի մեծ դերը: Հիմնականում դրանով է պայմանավորված լատինաամերիկյան մի շարք երկրների մրջազգային մասնագիտացումը:

• • •

Կենտրոնական Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրները շարունակում են մնալ որպես գյուղատնտեսական մթերքներ և հանքային հումք արտահանող (հանքահումքային կցորդ) երկրներ: Տարածաշրջանի արդյունաբերության առաջատար ճյուղը նավթի և բնական գազի արդյունահանումն է: Առաջատարներն են Մեքսիկան և Վենեսուելան: Ածխի արդյունահանմամբ առաջատարը Կոլումբիան է:

• • •

Երկաթաքարի պաշարներով Բրազիլիան երկրորդն է՝ ՌԴ–ից հետո, արդյունահանմամբ՝ երրորդը՝ Չինաստանից և Ավստրալիայից հետո; Գունավոր մետաղաձուլությունը զարգանում է տեղական հարուստ հումքային բազայի շնորհիվ՝ արդյունահանում, ձուլում, արտահանում: Պղնձի ձուլմամբ առաջատարներն են Չիլին, Պերուն, Մեքսիկան, ալյումինի ձուլմամբ՝ Բրազիլիան, Արգենտինան, Վենեսուելան:

Շաքարի արտադրության ծավալով Բրազիլիան աշխարհում առաջինն է, աչքի են ընկնում նաև Մեքսիկան, Կոլումբիան, Կուբան: Լատինական Ամերիկայում է արտադրվում շաքարի համաշխարհային արտադրանքի 1/3–ը: Գրեթե բոլոր երկրներում մշակում են շաքարեղեգ, Չիլիում, Ուրուգվայում՝ շաքարի ճակնդեղ:

• • •

Տարածաշրջանի ցամաքային **տրանսպորտային ցանցի ուրվագիծը** ցույց է տալիս բնակչության և տնտեսության տեղաբաշխումը: Տրանսպորտային ցանցը համեմատաբար խիտ է ծովափնյա շրջաններում: Լավ արտահայտված է տրանսպորտային ցանցի «**գաղութային կոնֆիգուրացիան**» (բացատրեք երևույթը): Լատինական Ամերիկայի արևմտյան ծովափով ձգվում է **Պանամերիկյան ավտոմայրուղին**, Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսների միջև՝ **Ամազոնյան** մայրուղին:

• • •

Լատինական Ամերիկայում ժամանակակից ազգերը ձևավորվել են բազմաթիվ ժողովուրդների և ռասաների միախառնման արդյունքում: Արդեն մի քանի հարյուրամյակ Լատինական Ամերիկայում ընթանում է լեզուների, մշակույթների, սովորույթների, ավանդույթների, բարքերի միախառնման և նոր ժողովուրդների ձևավորման գործընթաց: Ռասայական միաձուլման գործընթացն ավելի է խորացել:

Լատինական Ամերիկայի երկրներ են գաղթել նաև շատ հայեր: Հայկական համեմատաբար խոշոր գաղթօջախներ են ձևավորվել Արգենտինայում (80 հազար), Բրազիլիայում (40 հազար), Ուրուգվայում(20 հազար):

• • •

Լատինական Ամերիկայում բնակչության միջին բնական աճը մոտ է համաշխարհային ցուցանիշին՝1,1%: Աշխարհամասի բնակչության թվաքանակը 655 մլն. է: Գերխոշոր երկրներն են Բրազիլիան (220 մլն.), Մեքսիկան (130 մլն.):Լատինական Ամերիկան զարգացող երկրների մեջ առաջինն է ուրբանացման տեմպերով և մակարդակով: Որոշ երկրներում ուրբանացման մակարդակը հասնում է (90%-ի)՝ Ուրուգվայում՝ (95,5%), Արգենտինայում (92,1%), Վենեսուելայում (88,3%), Չիլիում (87,7%) Բրազիլիայում(87.1%): Լայն տարածում ունի նաև «***կեղծ ուրբանացումը***» (վերհիշեք հասկացությունը):

• • •

Տարածաշրջանի գրեթե բոլոր երկրներում գյուղատնտեսության առաջատար ճյուղը **բուսաբուծությունն** է: Ամասնապահությունը առաջատար է Արգենտինայում, Պարագվայում, Ուրուգվայում: Խոշոր եղջերավոր անասնապահությամբ առաջատար են Բրազիլիան և Արգենտինան, խոզաբուծությամբ և թռչնաբուծությամբ՝ Բրազիլիան «**Սադիա**» «**Լանգուրու**», մանր եղջերավոր անասնապահությամբ՝ Արգենտինան և Անդյան երկրները, ձկան որսի ծավալով՝ Չիլին (աշխարհի առաջատար երկրներից է):

Թեև Լատինական Ամերիկայի գետային ցանցը բավականի խիտ է, բայց **ներքին ջրային տրանսպորտը** թույլ է զարգացած: Ամազոնով ծովային նավերը հասնում են գետաբերանից միջև 3000կմ հեռավորության վրա գտնվող **Մանաուս** նավահանգիստը: Ծովային տրանսպորտով են իրականացվում տարածաշրջանի պետությունների գրեթե ամբողջ արտաքին առևտրային փոխադրումները: Խոշորագույն նավահանգիստերն են **Բուենոս Այրեսը**, **Ռիո դե Ժանեյրոն**, **Սանթուսը** (Սան Պաուլո քաղաքի մոտ): Ջրա-

տարողությամբ աշխարհի ամենամեծ առևտրային նավատորմը համարվում է Պանամայինը, թեպետ այդ երկրի նավերն իրականում պատկանում են այլ երկրների: